


ԶՐՈՒՅՑՑԵՐ
ԽԱՐՈՒՅՑԿԻ ՇՈՒՐՈՅԸ



ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

37 (47)
4-83

ԴԵՏՐԱՍ

37(47)

4-83

ԱՅ

ԶՐՈՒՑՑՆԵՐ ԽԱՐՈՒՑԿԻ ՇՈՒՐՋԸ

10 MAR 2010

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Թարգմ.

Ս. Ռամյան



ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԲՑ ՄԱՆԿԱՊԱՏԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԶԵՐԵԼԱՆ
1938

24 MAY 2013

44 789



1647

38

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ԽՍՀՄ հաղաբացիներն ու նեն
կրթության իրավունք

ԽՍՀՄ Սահմանադրություն, հոդված 121

Յերբ իսպանական բանվորին կամ գյուղացուն
պատճում են մեր Ստալինան Սահմանադրության
մասին, նրանք բացականչում են՝ «Ինչպես: Միթե
բոլորը կարող են սովորել. բանվորների լեռեխա-
ները, գյուղացիների զավակները — բոլորը կա-
րող են կրթություն ստանալ»:

Իսպանիայում աղդաբնակշության մեծամաս-
նությունն անդրագետ է: Կապիտալիստական լեր-
կըրներում ավելի ու ավելի լե քշանում սովորող-
ների թիվը Ինչ ոգուտ համալսարանն ավար-
տելուց, լերբ միհնույն է, գործ չպիտի ճարպի:
Փակվում են գպրոցները: Յերեխաները սովագահ
են լինում իրենց գործազուրկ ծնողների հետ
միասին: Ինչով գնալ գպրոց, վոչ տաք նախաճաշ
կա, վոչ հագուստ, վոչ վոտնաման:

Մեր լերկրում աշխատավորութիւնը տրված են կրթութիւն ստանալու, սովորելու և իրավունք, և լայն հնարավորութիւններ։ ԽՍՀՄ-ում ապրող բուլոր լերեխաններ՝ սկսած 8 տարեկանից, դպրոց են տճախում։ Մեր բարձրագույն զպրոցներում, տեխնիկականներում կրթութիւնը ձրի է։ Խորհրդային ինտելիգենցիայի՝ ուսուցչութիւն, ճարտարապետների, գյուղատնտեսների և այլն 80⁰/օը բանկորների ու աշխատավոր գյուղացիութիւն ծոցից են դուրս լեկել։ Մեր լերկիրն ամբողջովին սովորում է։ Հաշված ե, վոր ԽՍՀՄ-ում լուրաքանչյուր լերեք հոգուց մեկը սովորում ե դպրոցում, բուհերում, դասընթացներում կամ հեռակայում ե։ Մարդկութիւն պատմութիւն սեջե վոչ մի ժողովուրդ չի ունեցել նման հնարավորութիւններ։

Նաև եցեք անցյալին։ Ինչպիսի դժվարութիւնը, ինչպիսի տանջանքով ու զոհողութիւններով գիտութիւններ ելին ձեռք բերում անցյալի մեծագույն մարդիկ։

* * *

XVI դարում, մի այնպիսի դպրոցում, վորաեղիշում եր կրօնավորի կամայականութիւնը, վորտեղ սովորողին ծեծում ելին ճիպոտով, հահուում, սովորել ե Գալիլեո Գալիլեյը — մեծագույն ֆիզիկոսն ու աստղաբաշխը։ Դպրոցում Գալիլեյին

սովորեցնում ելին, վոր տիեզերքի կենտրոնում անշարժ կանգնած ե Յերկիրը, վորի շուրջը պտըտվում են արեգակն ու աստղերը։ Այդպես սովորեցնում ելին նրան ու արդակես ել նա պետք ե ովորեցներ ուրիշներին։ Այդպես եր հրամայում ամենազոր լեկեղեցին։ Բայց Գալիլեյը համարձակվեց զնալ այլ ճանապարհով։ Կոպերնիկոսի նման նա ապացուցեց, վոր Յերկրի անշարժութիւն մասին լեզած գաղափարը ճիշտ չե։ Յերկիրն ե, վոր պտտվում ե արեգակի շուրջը։ Դա գիտական ճշմարտութիւնն ե, սակայն նա հակասում եր սուրբ գրքին, ու լեկեղեցին սկսեց կատաղի պարզար հավատափոխի դեմ։ Յոթանասնամյա հիվանդ ծերունուն ինկվիզիցիան կանչեց գատելու։ Նրան բռնութամբ ծնկի չոքեցրին ու ստիպեցին ամել՝ «լես հավատում եմ ու միշտ պիտի հավատամ նրան, ինչ համարում եք ճշմարտութիւնն և ինչ վոր ուսուցանում ե լեկեղեցին»։

Գալիլեյի համախոհը՝ Զորդանո Բրունոն կյանքով հատուցեց իր գիտական համոզմունքների համար։ «Գթառատ» լեկեղեցին արգելեց արյուն թափել, նրան դատապարտեցին մահապատժի «առանց արյուն թափելու» — ալսինքն այրելու։ Յեզ Զորդանո Բրունոին կենդանի այրեցին խարույկի վրա։

* *

— Իսկ ինչու համար են կետերը, — հարցրեց
աշակերտը լուր ուսուցչին:

— Նրա համար, վոր քարոզիչներն այդպես
են կարդում սուրբ գիրքը. հենց կետ և թե չե՞
նրանք կանգնում են:

— Իսկ ինչու կանգ առնել, լերը կետ ե:

— Նրա համար, վորպեսզի շունչ քաշել. միանշ
գամից շատ չի կարելի կարդալ:

— Ապա ինչու մի դեպքում Յ բառից, մյուս
դեպքում քսան բառից հետո յեղած կետը. լավ
չե՞ր լինի հավասար բաշխեին կետերը բառերի մեջ:

Վերջին հարցին ուսուցիչը պատասխանել չկա-
րողացավ, նեղացավ աշակերտից, փայտը վերց-
րեց ձեռքն ամբողջ ուժով խփելով, լուրա-
քանչուր հարվածից հետո կրկնում եր՝ «առ քեզ
մեկ կետ, առ քեզ յերկու կետ, առ քեզ յերեք
կետ»...

Ուսուցիչը ճորտատեր ազնվական վոլկենշտեյ-
նի գոնապանն եր, իսկ աշակերտը նույն ազնը-
վականի ճորտի վորդի Միշա Շչեպկինը. Այդպես
սկսեց սովորել հայտնի ուսու դերասանը: Շչեպ-
կինը դպրոց ընդունվեց բախտավոր դիպվածով:
Դրագետ ճորտը — դա հազվագետ յերեսութ եր-
ոձորտ գրողացու զավակին ընդունել գիմնազիա-
— դա անպատվաբեր բան եր:

Իսկ ինչպես եր Շչեպկինը սովորում դպրոցում:
Դասադիրքը պետք է սերտելին անդիր, բառ առ
բառ. Դպրոցը սովորեցնում եր ստել, լերեսպաշ-
տություն անել: Շչեպկինը պատմում է, թե ինչ-
պես տարեկերջի քննություններից առաջ ուսու-
ցիչը զգուշացնում եր իրենց՝ «որինակ դռւ, բթա-
միտ, չես կարող պատասխանել իմ տված հարցին,
պատասխանիր մի ալլ գիտությունից մի ալլ սո-
վորած բան, մի խոսքով ինչ վոր գիտես. թող
ներկա լեզողները կարծեն, վոր վոչ թե չգիտես,
ալլ լավ չլսեցիր»:

Ուսուցչի գլխավոր պարտականություննե-
րից ձեկը — ծեծելն եր: Այն ժամանակ գործում
եր մի գիրք, վորը զրել եր XVI դարում ավագ
տերտեր Սիլվեստրը և վորը ձեռնարկ եր ուսու-
ցիչների համար: Գիրքը տալիս եր այսպիսի խոր-
հուրզներ՝ «պատմիր լերեխալին մանուկ հասա-
կում և կուրախանաս նրանով, յերբ նա տղա-
մարդ կդառնա», «փոքր հասակում նրան իրա-
վունքներ մի տուր և ջարդիր նրա կողերը»,
«յի խղճա յերեխալիդ, յերկաթով ել ծեծես, նա
չի ձեռնի, բայց հետո առողջ կլինի»

* *

Մոտ 400 տարի յեր հարկավոր, վորպեսզի լեռ-
նարդո-Դաշ-վինչու հոյակապ պատկերը կանգներ

մարդկութիւն առաջ իր ամբողջ մեծությամբ։
Միայն անպյալ գարում լուս տեսան նրա
գործերը, որագիրը, գիտական աշխատությունները։

Մենք հարգում ենք Աեռնարդո-Դա-Վինչու
վոչ միայն վորպես հանճարեղ նկարիչ արվեստա-
գետի, այլև վորպես մեծ աստղաբաշխի, Փիզի-
կոսի, մեխանիկի, յերկրաբանի, հնաբանի, անա-
տոմի, Փիզիոլոգի, բուսաբանի։ Նա ավել ետանկի
գաղափարը։ Նա սահմանեց ավիացիայի հիմնա-
կան սկզբունքները, տվեց թուչող մեքենայի առա-
ջին ուրվագիծը։

Բայց այն ժամանակներում, յերբ ապրում եր
Աեռնարդո-Դա-Վինչին (1452-1519), վտանգավոր
եր նույնիսկ յերազել, վոր մարդ կարող ե սուզ-
վել ծովի հատակը կամ թուչել ողում։ Այդպես
մտածողին անմիջապես կմեղադրելին վորպես
հերետիկոսի կամ կախարդի։

* * *

Միթե Լոմոնոսովը — ուսս մեծ գիտնականը կա-
րողացավ հանգիստ կատարել իր գիտական աշխա-
տանքը՝ Վնչ. նրան ստորացըին, հալածեցին. նը-
րան տալիս ելին աղքատիկ ոռճիկ. վերջում նրան
դատեցին ու կայացրին վճիռ. «Ճտրակով ծեծել
ու աքսորել Միքիր»։ Միայն պատահականությամբ
փոխվեց վճիռը։ Մի քանի տարի շարունակ տանջ-

վելով ու պալքարելով, Լոմոնոսովը կարողացավ
վերջապես XVIII դարում կազմակերպել Խուսաս-
տանի անդրանիկ քիմիական լաբորատորիան։

Հովհանն Գուտենբերգից — տալագրության գյու-
տի այդ անմահ հեղինակից խլում են նրա գյուտը,
իսկ նա չունենալով միջոցներ կատարելազոր-
ծելու իր փալփայած գործը, ապրելու ուժ չունե-
նալով, մեռնում է ծալը աղքատության մեջ։

* * *

Կապիտալիստական լերկրներում, Փաշիստա-
կան վայրենի կարգերում տեղ չկա ժողովրդա-
կան ստեղծագործության համար։ Յեթե գիտնա-
կանը չի աշխատում պատերազմի համար, շահ չի
տալիս կապիտալիստին — այդպիսին նրանց պետք
չե։ Յարական Ռուսաստանում Յիոլկովսկին մե-
կուսացված եր ու արհամարհված։ Միայն Հոկտեմ-
բերիան Սոցիալիստական Մեծ Հեղափոխությունը
հնարավորություն տվեց նրան իրականացնելու
իր գաղափարները։

Շատ հաճախ կապիտալիստը գնում է այս կամ
այն գլուտը, ծածկում, վոչնչացնում հենց նրա
համար, վոր նա իրեն ձեռնտու չի։ Այդ նույն
նպատակով լուցկու արքա Կրեգերը գնեց «մշարն-
ջենական լուցկին»։

Ֆաշիստական Գերմանիայում գիտնականները,
գրողները, վորոնք չեն ցանկանում քարոզել ֆա-

շիզմին՝ ձեռնուու գաղափարներ — անեն տեղ
հետապնդում ու հաղածվում են: Նրանց նե-
տում են բանտերը, քշում աքսորավայր: Ելնըշ-
տելնը, համաշխարհային անուն վաստակած այդ
մեծ գիտնականը, ստիպված եր թողնել Գերմա-
նիան: Բարբարոս ֆաշիստները խարուէկի վրա
հրապարակներում այրում են մարդկային ժտքի
լավագույն գործերն ու արգասիքը — Մարքոսի,
Ենգելսի, Լենինի, Ստալինի, Դարվինի, Դորկու,
Հայնեյի անմահ գրքերը: Ֆաշիստական Գերմա-
նիայում գիտնականին ալսոր նույնքան ծանը ե
ապրել, ինչքան ծանը եր միջնադարի մոայլ
ժամանակներում:

* * *

Անցյալում Հուսելինին հնաջողվեց սովորել: Յերբ
Բագվի նավթաթորման գործարանների թուրք
բանվորներն ուղղում ելին պայքարով գպրոց նվա-
ճել իրենց լեռեխանների համար, գործարանատեր
կապիտալիստ Թաղիեն ասում եր:

— Դուք, մուսուլմաններ, ողի չեք խնում, չմտա-
ծելով, վոր դա վնասում ե ինքնակալությանը:
Դըա համար ել կառավարությունը գպրոց բաց
անելու միջոցներ չի տալիս:

Բանվորները գպրոց ելին ուղղում, իսկ նրանց
առաջարկում ելին գինետուն: Այժմ Հուսելինը

գործարանի վորակյալ վարպետ ե: Նա սովորում
ե. սովորում են նրա կինը, լերեխանները: Սովո-
րում են մարդենի, աղքարեջանական լեզվով:

Յարական Ռուսաստանում ազգային փոքրա-
մասնությունները պահպում ելին կուլտուրալից
հեռու, աղքատության մեջ: Մինչև հեղափոխու-
թյունը Բուրյաթ — Մոնղոլիայում հարյուրին ուժ
գրագետ եր ընկնում: Կային մի քանի չեկեղե-
ցական ծխական դպրոցներ, վորտեղ սովորեց-
նում ելին ուսուց լեզվով, իսկ այդ լեզուն
ժողովուրդը չգիտեր: Այժմ, լերբ ուսուցումը տար-
գում ե մարդենի լեզվով, լերբ ստեղծվել ե մատ-
չելի լատինական ալբուրենը, աղքարնակչության
լերեք քառորդից ավելին գրագետ են դարձել:
Իսկ ուսուց լեզուն մեզ մոտ մեծ սիրով սովո-
րում են ըոլոր ժողովուրդները:

Յարական Ռուսաստանում շատ ժողովուրդներ
կային, վորոնք միայն խոսել գիտելին. գիր չու-
նելին. չունելին նաև ալբուրեն: Այժմ նրանք
ունեն իրենց գիրն ու գրականությունը: Խոր-
հըրդարին մեծ Միության մեջ սովորում են 83
տարբեր լեզուներով: Ազգային լեզբարական
հանրապետություններում ու մարզերում նրանք
ունեն իրենց բուհերը, տեխնիկումները, փար-
թամորեն ծագելում ե գրականությունը, թատ-
րոնն ու արվեստը:

Իհարկե նույն բանը չի արվում կապիտալիստական յերկրների ազգային փոքրամասնությունների համար: Ահասատանում հետապնդում ու փակում են բելոռուսական, ու կրախնական դպրոցները: Դերմանիակում փակվում են լինական դպրոցները:

* *

Միայն մեր իրավակարդում, միայն Ստալինյան սեծ Սահմանադրությունը լուրաքանչյուր աշխատավորի առաջ բացում ե անծալրածիր հեռանկարներ աճելու, կատարելագործվելու համար: Գիտությունը մեզ մոտ՝ զաշտերում թե գործարաններում, գյուղերում թե քաղաքներում մեծարվում ե ու հարգվում: Գիտությունն ոգնում ե ժողովրդին պարագելու հարուստ բերքի և աշխատանքի բարձր արտադրողականության համար: Տաննիակ հազարավոր ստախանովականներ առաջ են մղում գիտական միտքը նոր, ավելի բարդ խնդիրներ լուծելու համար: Գիտության ու աշխատանքի միասնության հիմքի վրա ել ավելի ծաղկելու յեղիտական ստեղծագործությունը:

Միայն Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխությունից հետո ծագալվեց ժողովրդի ստեղծագործությունը: Դժվար ե թվել այն բազմաթիվ մտածող-

ներին ու գյուտարարներին, վորոնց տաղանդը, շնորհալիությունը յերևան յեկավ, զարգացակ միայն խորհրդային իշխանության որոք: Ահա ձեզ արգելակների (տորմողների) գյուտարար Մատրոսովը ու Կազանցեվը, համաշխարհային շախմատիստ կոմյերիտական Բուտիննիկը, վերջիրս մահցած գրող Ն. Ռոտրովսկին, վորը հիվանդության ծանրագույն որերին գրեց աննման գրքեր, անա գյուղատնտեսական գիտելիքների անվանի մարդիկ՝ Ցիցինը և Լիսենկոն... Ահա Ստախանովը, Դեմչենկոն, Կրիվոնոսը, Գոլցտեյնը, Ռյատրախը և ուրիշ շատ շատերը: Դեռ ինչքան ինչքան շնորհալիներ կտա, կաճեցնի մեր անզուգական յերկիրը:

Եերբ դուք, ուսումնասիրելով Ստալինյան Սահմանադրությունը՝ կհասնեք 121-րդ հոդվածին, հիշեք այն հազարամյա դասակարգային պայքարը, վորը մզել ե աշխատավոր մարդկությունը, մինչև վոր յերկրագնդի մեկ վեցերորդ մասում կարողացել ե նվաճել կըթության իրավունքն իր համար:

Եեր յերկրում բոլորն ունեն կրթության իրավունք, ուստի բոլորը պարտավոր են սովորել լավ ու գերազանց:

Պատ. իսմբագիլ՝ Հրաշյա Կովողյան
Տեխ. իսմբագիլ՝ Ան. Գասողաբյան
Սըբագրիչ՝ Թ. Հովհակիմյան

Գլավետի լիազոր՝ Հրատ. 4205.

Պատվեր 1195. Տիրաժ 1500.

Թուղթ 72×105. Տպագրական 1 մամուլ.

Մեկ մամուլով 15,360 նիշ Հեղինակային 1/2 մամուլ

Հանձնված և արտադրության 14/նոյեմբերի 37 թ.

Վարագրված և անվագրության 23 փետրվարի 38 թ.

Գինը 50 կուլ.

Պետական և առարկան, Յերևան, Լենինի փող. 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0225459

ԳՐԱԴԱՐԱՆ

174

44.789

Право образования
Гиз Арм. ССР, Ереван, 1938 г.